«Հետք» թերթի լրագրող

Հրանտ Գալստյանին

Հարգելի պարոն Գալստյան

Ի պատասխան Ձեր 27.04.2018թ. հարցման, հայտնում եմ, որ

ՀՀ օրենսդրությանը համապատասխան Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի՝ վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ փաստաթուղթը լիազոր մարմնի կողմից տված համապատասխան տեղեկանքն է, որն էլ սահմանված կարգով ներկայացված է ՀՀ Ազգային Ժողով և համարվել է պատշաճ:

Ինչ վերաբերում է Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի Մեծ Բրիտանիայի քաղաքացիության դադարեցման հետ կապված փաստաթղթերին՝ հայտնում եմ, որ նշված փաստաթղթերը անձնական բնույթ ունեն, ուստի և նպատակահարմար չենք համարում դրանց տրամադրումը:

Ինչ վերաբերում է Ազգային ժողովի պատգամավոր Նիկոլ Փաշինյանին այդ թղթերը տրամադրելուն, դա արվել է ծանոթացման համար, քանի որ Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը դա նրան անձամբ խոստացել էր:

Հարգանքով,

Հասմիկ Պետրոսյան
Հանրապետության Նախագահի օգնական